ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2023 **թ**. **փետրվարի** 9-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի

ՀՀ, ք. Երևան 09.02.2023 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2023 թ. փետրվարի 9-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 7 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 76-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյան):
2. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի աշխատակարգը» հաստատելու և 2015 թ. սեպտեմբերի 24-ին հաստատված «Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
3. «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» լրացում կատարելու մասին (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
4. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռազմավարական պլանավորման կենտրոնի կանոնակարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյան):
5. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մարքեթինգի բաժնի կանոնակարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյան):
6. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի շարունակական կրթության կենտրոնի կանոնակարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):

7. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի տնօրեն Լ. Խառատյան):
8. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանման կանոնակարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր Է. Ասրիյան):
9. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի ընդունելության, տեղափոխման, ազատման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր Է. Ասրիյան):
10. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի փոխադրման, սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, քննությունների, ամփոփիչ ատեստավորման անցկացման ու ավարտման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր Է. Ասրիյան):
11. «ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան):
12. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան):
13. ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Պատմություն և մշակույթ» (խմբ.՝ Է. Մինասյան), «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» (խմբ.՝ Լ. Ավետիսյան), «Բանբեր Երևանի համալսարանի. փիլիսոփայություն, հոգեբանություն» (խմբ.՝ Է. Հարությունյան), «Գիտական տեղեկագիր. ֆիզիկա և մաթեմատիկա» (խմբ.՝ Վ. Աթաբեկյան) հանդեսները հրատարակության երաշխավորելու հարցը (ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյան)
14. Ընթացիկ հարցեր

1. **ԵՊՀ գիտական խորհրդի** 2022-2023 **ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում**:

ԵՊՀ գիտական խորհուրդը, ընդունելով նիստի օրակարգի վերաբերյալ հնչած առաջարկները, հաստատեց 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել 2022-2023 **ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը**:

2. ««**Երևանի պետական համալսարան**» **հիմնադրամի գիտական խորհրդի աշխատակարգը**» **հաստատելու և** 2015 **թ. սեպտեմբերի** 24-**ին հաստատված** «**Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը**» **ուժը կորցրած ճանաչելու մասին**:

Անցնելով օրակարգային երկրորդ հարցին՝ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգը հաստատելու և 2015 թ. սեպտեմբերի 24-ին հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը: ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը հաստատել է ԵՊՀ՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որի համաձայն՝ փոփոխություններ են տեղի ունեցել նաև գիտական խորհրդի իրավասությունների ու գործառույթների շրջանակում, և ըստ այդմ՝ նոր աշխատակարգի նախագիծը համապատասխանեցված է նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությանը: Բարձրաձայնված հարցերից ու ծավալված քննարկումից հետո ԳԽ-ն հաստատեց ներկայացված նախագիծը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 61, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 6):
Որոշվեց.
հաստատել «**Երևանի պետական համալսարան**» **հիմնադրամի գիտական խորհրդի աշխատակարգը**» **և ուժը կորցրած ճանաչել** 2015 թ. սեպտեմբերի 24-ին հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը:

3. «**Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում**» **լրացում կատարելու մասին**:

Օրակարգային հաջորդ հարցով ԵՊՀ գիտական խորհուրդը լսեց ու հաստատեց «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» լրացում կատարելու մասին հարցը:

ԵՊՀ ռեկտորի խոսքով առաջարկվում է կարգը լրացնել նոր կետով ու ներդնել «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչումը, որը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման գիտական խորհրդի առաջարկով ու ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ շնորհվելու է ԵՊՀ-ում առնվազն 30 տարվա գիտամանկավարժական ստաժ (որից առնվազն 10 տարին՝ ԵՊՀ-ում նաև վարչական պաշտոն զբաղեցրած), գիտական աստիճան ու կոչում ունեցող ԵՊՀ աշխատակցին երկարատև աշխատանքի,

գործունեության և ԵՊՀ զարգացման գործում նշանակալի ներդրման համար: ԳԽ-ն հաստատեց ներկայացված լրացումը:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 75, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1):
Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» լրացում կատարելու առաջարկը:
4.««**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռազմավարական պլանավորման կենտրոնի կանոնակարգի» հաստատում**:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյանը ներկայացրեց «ԵՊՀ ռազմավարական պլանավորման կենտրոնի կանոնակարգը»: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանի ռազմավարական և պլանավորման կենտրոնի կանոնակարգը»:

5. ««**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մարքեթինգի բաժնի կանոնակարգի» հաստատում**:

ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր Մ. Հովհաննիսյանը ներկայացրեց նաև ԵՊՀ մարքեթինգի բաժնի կանոնակարգը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 75, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանի մարքեթինգի բաժնի կանոնակարգը»:
6. ««**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի շարունակական կրթության կենտրոնի կանոնակարգի» հաստատում**:
Հաջորդիվ ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի կանոնակարգը: ԳԽ-ն հաստատեց ներկայացված առաջարկը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել «ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի կանոնակարգը»:

7. ««**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման** 2023-2026 **թվականների ծրագրի իրականացման կարգի» հաստատում**:

Անցնելով օրակարգային հաջորդ հարցին՝ ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի տնօրեն Լ. Խառատյանը ներկայացրեց «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգը», որի վերաբերյալ պարզաբանումներից հետո այն հաստատվեց: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 75, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «**ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման** 2023-2026 **թվականների ծրագրի իրականացման կարգը**»:

8. ««**Երևանի պետական համալսարան**» **հիմնադրամի** «**ՍԹԵՄ դպրոց**» **կառուցվածքային ստորաբաժանման կանոնակարգի**» **հաստատում**:

Անցնելով օրակարգային հաջորդ հարցերին՝ ԵՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը ներկայացրեց ԵՊՀ «ՍԹԵՄ դպրոցի» կանոնակարգը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «**ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի կանոնակարգը**»:

9. ««**Երևանի պետական համալսարան**» **հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի ընդունելության**, **տեղափոխման**, **ազատման կարգի**» **հաստատում**:

Հաջորդիվ Է. Ասրիյանը ներկայացրեց նաև ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի ընդունելության, տեղափոխման, ազատման կարգը»: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «**ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի ընդունելության**, **տեղափոխման**, **ազատման կարգը**»:

10.««**Երևանի պետական համալսարան**» **հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի ընդունելության**, **փոխադրման**, **սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման**, **քննությունների**, **ամփոփիչ ատեստավորման անցկացման ու ավարտման կարգի**» **հաստատում**:

ԳԽ-ին ներկայացվեց նաև «ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի ընդունելության, փոխադրման, սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, քննությունների, ամփոփիչ ատեստավորման անցկացման ու ավարտման կարգը»: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 78, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել «**ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի փոխադրման**, **սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման**, **քննությունների**, **ամփոփիչ ատեստավորման անցկացման ու ավարտման կարգը**»:

11.«**ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման** (**մոնիթորինգի**) **և վերանայման կարգի**» **հաստատում**:

ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Արմեն Բուդաղյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգը, որի վերաբերյալ հատուկ կարծիք հնչեցրեց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Արթուր Մկրտիչյանը՝ կապված դրանով սահմանվող գործընթացների իրականացման հետ:
Որոշվեց.
ծավալված քննարկումներից հետո ԵՊՀ գիտական խորհուրդը որոշեց հարցի վերաբերյալ որոշումը կայացնել հաջորդ նիստի ժամանակ:

12.2022-2023 **ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում**:

Անդրադառնալով օրակարգի հաջորդ հարցին՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հրանտ Ժամհարյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները՝ նշելով, որ դրանցից մի քանիսը չեն բավարարում ներկայացված պահանջներին: Քննարկումից հետո ԳԽ-ն հաստատեց այն թեկնածուների վերաբերյալ որոշումները, որոնք համապատասխանում են կարգով սահմանված չափորոշիչներին, իսկ մյուսների դեպքում՝ դիտարկել խնդիրները, ապա նոր որոշում կայացնել:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 78, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել այն թեկնածուների վերաբերյալ որոշումները, որոնք համապատասխանում են կարգով սահմանված չափորոշիչներին, իսկ մյուսների դեպքում՝ դիտարկել խնդիրները, ապա նոր որոշում կայացնել:

13. **ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող** «**Պատմություն և մշակույթ**» (**խմբ.՝ Է. Մինասյան**), «**Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն**» (**խմբ.՝ Լ. Ավետիսյան**), «**Բանբեր Երևանի**

համալսարանի. փիլիսոփայություն, հոգեբանություն» (**խմբ.՝ Է. Հարությունյան**), «**Գիտական տեղեկագիր. ֆիզիկա և մաթեմատիկա**» (**խմբ.՝ Վ. Աթաբեկյան**) **հանդեսները հրատարակության երաշխավորելու հարցը**:

Հաջորդիվ ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Պատմություն և մշակույթ», «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», «Բանբեր Երևանի համալսարանի. փիլիսոփայություն, հոգեբանություն» և «ԵՊՀ գիտական տեղեկագիր. ֆիզիկա և մաթեմատիկա» հանդեսները հրատարակության երաշխավորելու հարցը, որը ԵՊՀ գիտական խորհուրդը հավանության արժանացրեց: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող վերոնշյալ հանդեսները:

Օրակարգային հարցերի ավարտին ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց Գիտական խորհրդի ձևավորման համամասնությունը՝ ըստ ստորաբաժանումների, որը հավանության արժանացավ:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան